Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2025 թվականի փետրվարի 6-ի N 40-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2025 թվականի փետրվարի 11–ից

«Հյուրերի մուտք բիզնես սրահ» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 11.02.2025թ-ից 30.09.2025թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից նախքան սույն Արշավը և Արշավի ընթացքում թողարկված Travel, Visa Signature, Visa Infinite, Visa Infinite Special Edition տեսակի քարտեր:
1.3 **Քարտապան՝** Արդեն գործող կամ Արշավի շրջանակներում թողարկված Travel, Visa Signature, Visa Infinite, Visa Infinite Special Edition տեսակի Քարտի քարտատեր:
1.4 **Visa Airport Companion՝** օդանավակայանների բիզնես սրահների մուտք գործելու համար նախատեսված հավելված:
1.5 Արշավին մասնակցելու դեպքում Քարտապանն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակում՝ 11.02.2025թ-ից 30.09.2025թ-ը ներառյալ, ինչպես գործող, այնպես էլ նոր պատվիրված Travel, Visa Signature, Visa Infinite, Visa Infinite Special Edition տեսակի Քարտերի Քարտապաններն ունեն Օդանավակայանների բիզնես սրահներում հյուրի մուտքի հնարավորություն հետևյալ քանակությամբ՝

- Travel - 2 հյուրերի հնարավորություն,
- Visa Signature - 4 հյուրերի հնարավորություն,
- Visa Infinite - 6 հյուրերի հնարավորություն,
- Visa Infinite Special Edition - Անսահմանափակ հյուրերի հնարավորություն:

2.2 Օդանավակայանի բիզնես սրահ յուրաքանչյուր այցին սահմանվում է 1 հյուրի անվճար մուտքի հնարավորություն:
2.3 Visa Infinite Special Edition Քարտապաններին Քարտի տեղեկատվական ամփոփագրով սահմանված 6 հյուրի հնարավորությունը պահպանվում է՝ արշավից հետո մինչև 31.12.2025թ-ը մարելու հնարավորությամբ:
2.4 Օդանավակայանների բիզնես սրահների ցանկը սահմանվում է Dragon Pass-ի կողմից, որը հասանելի է Visa Airport Companion հավելվածում:
2.5 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: